

ԲԱԺԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 Կարգադրութիւն
 Տարեկան 12 Գր.
 Վեցսուսան 6
 Արտասուսան սեփ հաւար Տարեկան 15
 Վեցսուսան 8
 Ամերիկայի հաւար Տարեկան 3
 Վեցսուսան 1.50
 ԿԱՆՈՒՄԻ ԿՅՆՈՒՄԻ

ՉԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել
 Խնայողութեամբ հասցնել

Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

R. P. Kalemecian, Mochimari-Verlag
 (Austria) Vienne W. 4

Մանուկան չոյր ստույի
 երեսին հաւար 40 սակրի
 Կ. իսկ վերջին երեսին հաւար 20 սակրի
 Եւ երեսին սակրի սեփակներու հաւար 20 սակրի կրչայ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԵ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՆԱԵԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Կրտսերական ձեռնիկ
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոչխարիոյ հաւար ձեռնիկ
 = 15 ՍԱՆԹԻՄ =

Վառանայի հաւար ձեռնիկ 10 սակրիս

ՇԱՐՋՈՒՄԻ ԼՈՐ ԲՍԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲՍԺԱՆԳԻՆԸ ՊԵՏԲ ԵՒ ԿԱՆՈՒՄԻ ՎՃԱՐԸ

ՖԵՂԱՅԻՆ

Կրակ է բռնել չորս դին ընդ
 Լէշեր ծածկում գաշտ, լեռ ու ձոր
 Արիւն վազում գետեր կազմած,
 Եւ նա թռչում ուրիշ փարած:

Գնայ սրարչու զուարթ, ուրախ,
 Երկրի կեանքէն ազատ անկախ,
 Հոն՝ ուր թափում են ընկերներ
 Կրակ՝ թրքի գլուխն ի վեր:

Թէ բռնուի փոյթ չէ տան,
 Խոնաւ բանտը և կախաղան
 Խորան է՝ ուր զոհուի պրկուն
 Ազատ ոգին խորխոս, խոսուն:

Ինչ թէ մեռնի լինի սի կոյն
 Այրել հայու սիրտը մարած:
 Թ'ազատ, փաղակ, կայծակ կըլտայ
 Բռնաւորի գլխին վրայ:

28 Ծոյեմբ.

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՄԵՐ ԲՍԺԱՆՈՐԻՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացումն ունին, կարգացին մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու տնունները պիտի յայտարարուի Շարժումի մէջ: Գանուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ: Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի մինչև դեկտ. 15ը: Մինչև այդ օրը պիտի սպանենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի հրատարակենք:

ՊԵՏԲ Ե ԾՏԱՊԵԼ

Կարնի կարոտելոց յանձնաժողովի նամակը կարողացողները պարզ կերպով կարող են հասկանալ որ այդ կարեւոր քաղաքի հայ բնակչութիւնը, շնորհիւ երկրաշարժի. մեծ տագնապի մէջ է և շտապ օգնութեան պէտքը ունի:

Մէն մի հայ անհատի պարտականութիւնն է յանկարծակի պատուհասի հկած կարնի հայերին օգնել: Վերոյիշեալ նամակը ստացող վաճառականը արդէն գիտի է Վարնայի թաղական խորհուրդին հանգանակութեան աջակցութիւն ստանալու համար. անշուշտ թաղականութիւնը կշտապի այդ մարդասիրական գործին ընթացք տալ:

Ոակայն ի՞նչ կարող է անել միայն Վարնան, պէտք է Բուլղարիայի միւս քաղաքներն էլ օգնութեան հասնեն, մանաւանդ Ֆիլիպէն և Ռուսչուկը ուր բազմաթիւ հայեր կան:

Օրինակ Ֆիլիպէի երգեցիկ խումբը կարող է մի հանգէս սարքել այդ նպատակով, Ռուս

չուքի երիտասարդներն էլ կարող են մի ներկայացում տալ: Վաճառականական տները կարող են փոքր շատե կարեւոր դումարներ նուիրել:

Բուլղարական հայ տարրի բոլոր խաւերը պէտք է ձեռք ձեռքի տան կարնին օգնութեան հասնելու: Պատուհասներ կան որոնց առջեւ գոյթ է ունենում և ամենաքարասիրտ ու անտարբեր մարդը. կարնի հայութեան գըլխին եկած պատուհասը այդ բացառիկներէն է:

ՎԱՐՆՈ

Կարնի կարօտի յանձնաժողովը հետեւեալ նամակը գրկած է Վառնայի պատուաւոր վաճառականի մը:

ՄԵՐ ՏԵՍԻՐ

Ձեր մեծագոտութիւնն անշուշտ իմացած է արկածալիբ աղէտն, որուն կարնի ենթարկուեցաւ երկրաշարժէ:

Յնցումներն, որոնք տակաւին կը շարունակուին, հոկտ. 28ին սկսան շատ խիստ կերպով և ամէն կողմ աւերակ դարձուցին մասամբ կամ ամբողջապէս, այնպէս որ հանրային թէ անհատական բոլոր շէնքերն վտանգուած են առ հասարակ և բնակչութիւնը հրապարակներու և փողոցներու մէջ ապաստանած են անպատկար խորհրթիներու և վրաններու տակ և ոմանք բացօթեայ են, որ ցրտաշունչ ձմրան մը արհաւիրքին հետ ապրուստի տաղանայն կրելու գործող հարկին տակը կը գտնուին. փրտակներու տակմանը զոհ տալով, «եթէ երբէք» ունէին պատասխարութիւն մը, որ իրենց ապրուստն ու պատասխարան պիտի կազմէր տիրող եղանակին մէջ:

Ամբողջ քաղաքը աղիոգրմ տեսարաններու թատր մը կը ներկայացնէ, յորում մէկ կողմէն ցուրտն ու մերկութիւնը, և միւս կողմէն չքաւորութիւնը ու անգործութիւնը սպառնական հանգամանք առած մտաւրտ գործազուծութեանց աղեխարչ աւերու միներն կը գոժեն այժմէն իսկ: Գիտէք արդէն թէ տեղական հայ տարրը մանաւանդ ըստ մեծի մասին արհեստաւոր դասակարգէն կը բազկանայ և արդէն այդ հանգամանքի մէջ է որ կը շնչուի իրական դժբաղդութիւնը, որովհետեւ նոր գարունէն ի վեր հրապարակին վրայ տնտեսութիւնը կը տիրէր արդէն և

ամէն ոք այնան այս օրերուն կ'սպասէր քիչ մը գործ ընելով ձմեռնային պէտքերն հողալու. ակնկալութեամբ ստեղծյն ցաւալի է դիտել թէ այս անակնկալ աղէտը բոլորովին ի զիրեւ հանեց արհեստաւորին այս յոյսն ու անգործութեան դասապարտելով, առօրեայ հացագնէն ևս զրկեց զայն մարդասէրներու գթութեանը կարօտ վիճակի մը ենթարկելով:

Այս ցաւալի կացութեան մէջ միւթարական պարագայ մ'է տեսնել թէ պիտական եւ թէ մասնական հանգանակութիւնը, թէպէտ ոչ անւազան, մասամբ կրցան սակայն հացի տաղանայն թեթեւցնել քիչ ժամանակի համար գոնէ ևս առ այժմ անմիջական խնդիր կը մնայ բնակարաններու գէթ մասնակի նորոգութիւններն, որ ոչ նուազ կենսական կէտեր են ձմեռային օրերու պատճառաւ, որոնք արդէն սկսած են իրենց աւերիչ ազդեցութիւնն ի գործ գնել, համաճարակ հիւանդութեանց ծնունդ տալով, որով դժուարին չէ այժմէն իսկ կանխատեսել թէ այս մասին փոքրիկ անտարբերութիւն կամ յապաղում տեղի պիտի տայ շարագոյն հետեւանքներու, որոնք մոռցնել պիտի տան ներկայն և մեր միջոցներու անձկութիւնը խեղճ ժողովուրդն հոն պիտի առաջնորդեն գործազուարթ, եթէ բարեպաշտական ձեռնարկութիւնք անոր առջեւն առնել չը փութան:

Վնասուած շէնքերու մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն ազգային շէնքերն. եկեղեցւոյ շէնքն ընդհանրապէս վտանգուած է ևս պետական որոշմամբ անոր դռներն փակուեցան ևս պիտի մնան ցփրաչինութիւն, որուն համար հինգէն վեց հազար օստ. ոսկի կը հարկաւորի ըստ ճարտարագիտական քննութեան: Մեծապէս վնասուած են նաեւ պարոցական հինգ շէնքերն և իւրաքանչիւրի նորոգութիւնն երկուքէն—երեք հարիւր լիւրայի կը կարօտի: Վնասուած են նաեւ Ս. Լուսաւորչի վանուց շէնքերուն մեծ մասն. նոյնպէս ևս գիւղական երեք եկեղեցիներ, որոնք բոլորն ալ անմիջական նորոգութեան կը կարօտին առ հարկի:

Արդ, իրաց այս ցաւալի վիճակն ներկայիս հաղորդելով ձեր մեծագոտութեան, վտան մը թէ իբրեւ ծանօթ երկրի դիրքին ու վիճակին, պիտի բարեհաճէք բարերար ձեռք մը կողակտել ձեր թշուառ հայրենակիցներուն և չը զլանալ ձեր եղբայրական ջանքերն, որոնք մեծ յոյ կը ներշնչեն մեզ, և ձեր շրջանակին մէջ հանգանակութիւն մը

կազմակերպել յանուն արկածնու կա-
րօտելոց, որոնց կրօնապաշտ յար-
գաց և սրտագին բարեմազթութեան
նկատելով որ կանխաւ ընդու-
նել հաճիք մեր խորին շնորհակա-
լութիւնները .

Ստորագրութիւնք . . .
17 նոյեմբ. կարին

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ 5 Սեպտեմբեր

Սիրելի ընկեր,

Ալվառինճը՝ Մուշէն լճէկ ժամ
հեռաւորութեան վրայ Մծմակ
լեռան ստորոտ գտնուած հայ
գիւղերէն մէկն է: այդ անառիկ
լեռնաշղթաներու ներքեւ գըտ-
նուած ըլլալուն համար, ամէն
օր և վարկեան կառավարութեան
ուշագրութիւն գէպի այդ հայ
գիւղն և իւր շրջակայ գիւղերն
եղած է ցարդ ու կըլլայ ընդ
միշտ, յեղ. շարժումներ կատեց-
նելու համար. 86—87 թուա-
կաններէն՝ արապոյներէն ու լեռն
ներէն սկսեալ մինչև այսօրս,
յեղ. խումբերը, այդ լեռան
շղթաներու մէջ ապաստանելով,
շարունակաբար գործած են ու
կը գործեն, իրենց ապրուստի
պիտոյքներն այդ գիւղերէն ստա-
նալով:

Այդ պատճառաւ ալ, ամէն
ժամանակ կառավարութիւնը
քակիչ ու քանդիչ գիրք մը ըլլա-
նած էր գէպի այդ հայ գիւղերն,
որպէսզի իւր այդ լորձանարար
ընթացքով ժամ առաջ անմար-
դաբնակ դարձունէր այդ կող-
մերն: Իսկ միւս կողմէն, այդ
գիւղացիք կառավարութեան այդ
կործանարար ընթացքին հակա-
ռակ, իրենց պայտեանական օժա-
խին հաւատարիմ պաշտպան,
մինչև վերջին շունջներին ուխ-
տած էին չը բաժնուիլ, և կառա-
վարութեան կողմէն շարժուած
ու հարստահարութեանց մինչև
այսօր գիւղացիք էին իրենց
տոկոսութեամբն ու հաստատա-
միա կամքով:

Անցեալներ՝ Ալվառինճ գիւղի
երիտասարդներէն երկուքը, որ
հայդուկային խումբի մէջ կը
գտնուէին, գիւղը, կիջնեն յե-
ղեկութիւններ հաւաքելու, և
միանգամայն ալ ուստի պատ-
րաստութիւն տեսնելով խումբի-
րուն հասցնելու համար, այդ
միջոցին իրենք ժանտարի քիւրտ
մըլղի զի մէջը գտնուելով, ատոնց
գիւղ գալին իմանալուն պէս, գիւ-
ղի ըրէյսին վրայ ճնշումներ ի
գործ կը դնեն, իրենց հետ տա-
նելու այդ երկու երիտասարդ-
ներն բռնելու համար:

Գիւղի ըրէյսը՝ իր օձիքը ա-
տոնց ձեռքէն չը կրնալ աղատե-
լուն համար, յակամայիցս կը

հարկադրուի ատոնց հետ երթալ
մինչև և այն տունը, ուր որ այդ
երկու երիտասարդներն կը գըտ-
նուին հղեր. տան դուռը ունի
կանգ առնելով կըսէ. «հա՛ս այս
տան մէջն են, ինչ որ կուզէք ը-
րեցէք.» իրենք առանձին ներս
մտնալէն վախնալով, կ'ստիպեն
ըէյսին իրենց [հետ ի միասին
մտնելու:

Երկու երիտասարդներն, 3
ժանտարի մէկ քիւրտէ և գիւղի
ըէյսի պաշարուած տեսնելով,
մէկէն հրապաններու կը դիմեն,
ու ակնթարթափի մը մէջ երկու
ժանտարը քիւրտը և ըէյսը մէկ
մէկ գնդակով գետին փռելէ յե-
տոյ. խոյս կուտան գէպի լեռը.
միւս ժանտարն որ խոյս տուած
էր, ձի նստելով Մուշ կը փախչի
ու Ալվառինճի մէջ պատահած
գէպին կառավարութեան կը
պատմէ:

Կառավարութիւնը՝ առիթէն
օգտուելով, ալալ մը զօրք կը
ըրկէ, այդ գիւղի ժողովուրդն
սուրէ անցունելու ու գիւղն ալ
կրակի տալու համար:

Իսկ միւս կողմէն՝ «Ա.» ի «Ղ.» ի
և «Ա.» ի երեք [խումբերն] Մծմակ
լեռն կազմուպատրաստ կը գտնու-
էին. երբ իրենց երկու ընկեր-
ներէն գիւղի պատահած ժամին
կը լսեն, շուտ մէկ մը իրենց մէ-
ջիւղը շարժելով, կը պատուիրեն
թէ՛ երբ գիւղի վրայ զօրք գալ,
իրենք իրենց տուններէն դուրս
չելլեն մենք ասկէց կը գիւղադ-
րենք անոնցն գտակով:

Մարդը զրկելէ յետոյ, գիր-
քեր գրաւելու մասին կը սկսին
խորհիլ. Մծմակ լեռան շղթան
երեքի բաժնելով. «բերք» ըսու-
ած տեղն «Ա.» ն իւր խումբով
կանցնի. «Մեծ Զորք» «Ղ.» և իւր
խումբին կը ձգուի. իսկ «Թա-
թուլ» ըսուած կատարն «Ա.» ն և
իւր խումբի կը մնայ:

Երեք խումբերը՝ իրենց գիր-
քեր գրաւելէ յետոյ, կուտոյ ը-
պէին կը սպասեն, քաջ գիտնա-
լով որ կառավարութիւն և խու-
ժան պիտի յարձակին այդ գիւղի
վրայ բնաջինջ ընելու. կանցնի
մէկ երկու ժամ. զօրքի և խու-
ժանի ապօքտով մը գէպի գիւղ
յառաջանալն կը տեսնեն, մօտե-
նալով գիւղին պաշարման կ'են-
թարկեն:

Յարմար ըրկէն հասած ըլլալով
խումբերն կը սկսին իրենց հրա-
պաններու գնդակներն սուլեցնել
զօրքերու վրայ. Զօրքը ինքզինք
յանկարծակի անել գրութեան
մէջ ինկնալն տեսնելով, կը սկսի
յետոս նահանջել, երբէք գիւղին
բան մը չը կրնալ ընելով. գիւ-
ղէն բաւական հեռանալով, թըր-
քական խորամանկութեամբ պատ-
գամաւոր մը բանակի կողմէ գիւ-
ղը զրկելով, գիւղի միջի առաջ-
նակարգ անձերէն քանի մը հո-
գինք կուզեն խնդրոյն վերս-

հասու ըլլալու համար, որով
գիւղի միջի գտնուածներէն 20
անձի շափ բանակը կ'ընթան բա-
ցատրութիւն տալու. զօրքը՝ հա-
յերը առնելով Մուշ կը վերա-
դառնայ, ուր առ սնց հարցաքն-
նութեան կը բանտարկեն:

Ահա տեսէք թըրքական կառա-
վարութեան, իւր կազմակերպ-
եալ բանակի և միանգամայն
թիւրք խումբանի քաջութիւնը,
որ խեղճ, խաղաղ ժողովուրդեան,
զլին գազան կարած ամէն շտե-
սակ անխղճութիւններն ի գործ
կը դնեն, իսկ այնտեղ ուր գի-
ւղացիներն ոյժ մը կը տեսնեն
մէկէն փախուստ կուտան. Ական-
ջը խօսի արտասահման բնակող
մեր հայրենակից եղբարց, որ
օրեր ամիսներ խանութու ու խահ-
վէներու անկիւններ նստելով,
ամենապտտած ձեւերով մէկզմէկ
կը զրպարանն ու անտեղի յար-
ձակումներ կը գործեն յեղ. կազ-
մակերպեալ մարմիններու վրայ,
այն պատճառաւ որ երբեմն եր-
բեմն կազմակերպուած և ուրից
ցզուր զինուած խումբեր մեր
մէջ կը մտնեն զմեզ պաշա-
պանելու. ինչպէս որ ատոնց
ներկայութիւնը, մինչև այսօրս
մեզ համար նպաստաւոր է եղած
ու կըլլայ ընդ միշտ, և ինչպէս
որ սոյն գէպից կը տեսնուի
թէ՛, ափ մը յեղափոխականներ
սհագին բանակ մը յետո կընկը-
կեն. ուրեմն ամօթ և բիր ամօթ
անոնց օրոնք, որ շատ և շատ
հեռուններ նստած, խղճերնին
մեռուցած, փոխանակ մեր հրա-
ւէրն լսելով օգնութեան փութա-
յին, ընդ հակառակ փափաքող-
ներուն ալ արգելք կը հանդի-
սանան իրենց հակառակ բրայա-
կանդալով:

(Շարունակելի)

Լօրէնս 20 նոյ

Ազգ մը որ կրօնամոլ է, ազգ
մը որ իր ծոցին մէջ կը պահէ
գիտակից, բայց զազրելի ա-
բարքներով լեցուն արա-
բածներ և վերջապէս ամեն ա-
նոք ու զոյնք իրենց հացը նաչ-
խելու կաշխատին ազգասիրու-
թեան կեղծ գիւղակի տակ. ազգ
մը որ տարիներու և դարերու
ընթացքին մէջ միշտ հալածանք
ու թշուառութիւն կրած է, այլ
եւս անոր օգին ստրկացած, միտ-
քը բոլորովին նախապաշարուածով
կաշկանդուած է, ու շատ գժուար
է անոր հետ գործ ունենանալ և
գիտակցութեան բերել ան. Այս-
պէս է և մեր հայ ազգը մեծ մտ-
սամբ, Մօտ 20 հազար հայ Ա-
մերիկայ տարագրուած է, որ ե-
թէ ոչ բոլորովին գոնէ չափով մը
գիտութեան շտեմարանը կարելի
է անուանել. ու այս գեղեցիկ տ-
ռիթէն հայերս չենք օգտուած և

չենք ալ ուզեր օգտուիլ, գեռ
տարի մը առաջ էր որ հրճուան-
քով կը նկարագրէի տեղւոյս գա-
ղութի յառաջդիմական քայլերը.
Իսկ այժմ այդպէս չէ, ես ալ այ-
սօր իմ քերական շնորհակցի Լօ-
րէնսի գաղութի նկատմամբ, շատ
կը ցաւիմ որ մինչև ցարդ [գը-
րածներու ետ առնել կը փորձեմ].
բայց նորէն ետ չեմ առներ սա
տրամաբանութեամբ թէ յառաջ-
դիմութեան ձգտումներ կային
մինչև և այս ինչ ատեն իսկ անկէ
վերջ երբ չկայ բնաւ ծածկելու
չէ ան. Ըսելու է լաւ աստիճան
լաւ, գէշ աստիճան գէշ. այս պի-
տի ըսեմ տեղւոյս հայ գաղութը
յետագիւրդութեան բացարձակ և
անհերքելի փաստեր ցոյց կու-
տայ. (բացառութիւնը) յարգելի
է) թուենք փաստերը. երբ ան-
հատ մը չի հետաքրքրուի ինդ-
րով մը, երբ անհատ մը չի վի-
ճեր, երբ անհատ մը չի կարգար,
երբ անհատ մը նոյն իսկ չու-
զեր լսելու խօսիլ, այլ հոս գիւ-
րին է ըսել թէ յետագիւրդութեան
ճամբան է այս Բայց որ ուրեմն
մենք կը գրենք ու մենք կը կար-
դանք, մենք կը խօսինք ու մենք
կը լսենք. Ահա այս է մեր գա-
ղութի իրական պատկերը. տա-
րի մը առաջ էր որ կը գրէի թէ
«խաբանի վարչութեան անունը
կայ ինքը չըկայ» բայց երբ չորս
ամիս առաջ վարչութիւնը փոխ-
ուեցաւ ու բաւական լաւ [բրիտա-
սարդներ] անցան յայդ գործին
գլուխը, լսարան հիմնեցին, և
հիմա տանը հինգ օրը անգամ մը
լսարանի երես կը տեսնենք, և
սակայն եկուր տեւ որ մեր գա-
ղութը պիտի չօգտուի անկէ, ո-
րովհետեւ չուզեր լսել ինչպէս
վերել յիշեցի, և մեր գրադա-
րանի վարչութիւնը գուցէ յու-
սահատի տեսնելով ժողովրդին
սառն վերաբերումը գէպի այն
հիմնարկութիւնը և դադրի գոր-
ծելէն առնալ ամեն պարագայի խտկ
բնաւ մեղադրելի չէ վարչու-
թիւնը. այլ յանցաւորը ժողո-
վուրդն է որ չուզեր առիթէն
օգտուիլ, ոչ միայն գէպի լսա-
րանը, այլ և հրապարակային
յիշափոխական ժողովներու ալ
նոյն պէտէ. Զէ, Լօրէնսի ժողո-
վուրդ չէ. այս ուղին կորստա-
բեր է. և գուցէ անպունդի դրո-
ները բացուին ձեր առջեւ. փո-
խեցէք այս ուղին և դառնէք
նախկին ուղիով քայլելու:

ԵՊՏԵԱԼ

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ



Հայը՝ նախանձախնդիր իւր հայրենիքի պատուին, երբ կը մաքառի անօրէն բռնակալութեան մը գէմը և ի սէր գաղափարի իր նուիրական ուխտին կուտով վերջ կուտայ՝ նա գաղափարական հայ մարդ է :

Հայը որ կընդունի գաղափարի սիրաւէտ ու փրկիչ ոյժը—յեղափոխութիւնը, ու ծառայելով անոր կը նպաստէ ծաւալումին, նա գաղափարական հայ գործիչ է :

Գաղափարական գործիչը պաշտօնէն է և ալ աւելի արժէք կունենայ, երբ կուտի ամենատարժաւորուն խորխտաբար կը նետուի կրակին մէջը, երբէք չը գաւաճանելով իրենց սկսբունքներուն չի վախնալով ոչ մի բռնակալական ճնշումէ ու կը ներկայացնէ գաղափարականին մեծութիւնը :

Հինգ միլիոն հայութեան մէջէն հազիւ գտնուեցան տասնեակ մարդիկ որոնք, տաճիկ բռնակալութեան լարած դաւերով քննասահարութիւնը զգալով, ի սէր հայրենեաց և ազգութեան քաջամարտիկ հերոսներ հանդիսացան կուտելով ու ծառայելով իրենց հետեւած գաղափարներուն, բուն պայքար ունեցան տաճիկ կառավարութեան գէմը և սնվելով կուտի մի որ մինչև ցարդ կը տեսէ :

Գործիչը մեծ պարտականութիւններ ունի կատարելիք. քանի նա առաջնորդուած է առողջ սկզբունքով, մարտը բարոյականով, երբէք կարեւորութիւն չունի անոր տալիս պատուելիական օրէնք ըստած բանը. ինչ որ մեր մի քանի անպէտ լրագիրները կը քարոզեն. ան միայն ստեղծուած է իր ասպարէզին համար, որ է շարունակ կուտ մղել ամէն մի բռնակալի առաջ, ուրիմ անոր ձեռքն է ազգութեան սպազան և անոր կամքէն է կախուած մեր «լինել չը լինելը» :

Շումլա 18 նոյ. 4 ԱՅԾ

Վահան Շահրխանի երկու ասի սուր զրածը Գուրպիքիանի մասին

ԱՍՕԹ Է

Թէեւ գիտեմ որ դուք որոշած էք «Իրաւունք»-ի անունը ձեր թերթին մէջ չը յիշել և չը զիջանիլ այդ թերթին հետ վիճաբանելու, բայց և այնպէս սպիտակուած եմ ձեզմէ խնդրել որ ընդունիք հետեւեալ գրութիւնս. որովհետեւ խնդիրը հասարակական է և ուրիշ միջոց մըն ալ չը կայ այդ մարդը հասարակութեան առջև որոշելու :

«Իրաւունք»-ի 56րդ թիւին մէջ կարգացի «Վարժապետական ես» խորագրով յօդուած մը ուր խորագրիւն իրեն յատուկ ստիպատութեամբ մը, կը զրպարտէ զիս թէ :

1) Իմ նախորդներս անխիղճ ու ասպիկար ցոյց տուած եմ :

2) Ազգային մարմինները միեւնոյն ջուրով լուացեք եմ :

3) Ժողովուրդը անբան ու անզգայ հռչակեր եմ :

4) Ամէնքը հողին հաւասար ստորնացուցեր եմ :

Եւ դեռ ուրիշ ազատ ճաղատ պոչով սուտեր՝ աղ պիպեւոր եղած են այդ դաւադիր գրութեան :

Այլքան ալ բարոյական սնանկութիւն...

Այսքան ալ կրքի մոլեգնութիւն...

Մարդ մը որ այդ աստիճանի անկում ունեցած է, բնականաբար պատուոյ ամէն զգացումէ զրկուած ճանչնալու է զինքը :

Երեսը թուքով ծածկէ այդպիսին աստակէ, կեղտերը երեսն հանէ, նորէն չամնար, նորէն չի զգար, բոլոր անարգանքներուն մէջէն դուրս կը պրծի և կը դիմէ իր միակ նշանաբանը—սուղ, կեղծել, զրպարտել՝ իր կաշին հոգալու համար...

Այս կարգի անկեպի մը գրուած քին միակ արժանի պատասխանը թէ և արհամարհանքն է, բայց՝ որովհետեւ բաղդին չեմ դիտեր որ խենթ խաղովը, զժբաղդաբար իմբազիր ըլլալու յաւակնութիւնը ունեցեր է, կը ստիպուի իր դիմակը պատուել քանի որ անկեղծութեան քողին ասկ կը ձգնի իր անձնական գաւաճ հաշիւները կարգադրել ինչ գնով ալ ալլայ, մինչև իսկ սոցալային շահերու վտանգումով և ժողովրդի մը հասկացողութիւնն ու արժանապատուութիւնը կասկածի տակ ձգելով :

Այդ մարդուկը՝ իր գրական անպարկեշտութեան վրդովուած, զինքը լքանելէն ի վեր, օր մը իսկ չէ դադրած մութի մէջ, անկիւնները, անպատկառօքն մեզ զրպարտել :

Ասիկա խօսք չէ : Ի հարկին բոլոր ըսածներս կապացուցանեմ փաստերով եւ նոյն իսկ լրագրութեան մէջ իր մասին բրտեկիտայալ մը հրատարակելով :

Այս անգամ ալ կերելի համարձակութիւն անելով իր նման կարգ մը մոխիր խառնողներէ, վարժապետական «ես»ը քննադատելու պատուակով, նոյն գծուած հաշիւները առաջ քնել կը խորհի, առանց մտածելու որ հորիւրաւոր հոգիներու ներկայութեան խոստաներս երբ կը խեղաթիւրէ իր երեսին «ամօթ» է, ամօթ» պոռագողներ պիտի գտնուին :

Բայց զարմանալի չէ. քանի որ խեղճը կարմրելու միտք չունի և իր զարնուրէի տգիտութեամբ կը կարծէ թէ ժողովուրդը իր արդահատանքին արժանի, անբան ու անզգայ է, որմէն սնօրէն մը իր մէկ ճառով կրնայ ձրի ծափեր խելի...

Գերազանց տխմարութեան հետ որքան ալ կոկողովից յաւակնութիւն... Ոլիմպական բարձունքէդ վարիչի, մարդուկ, և ժողովրդին հանդէպ անարգանք մը վերագրելով ինձի, դու ինքզ կոպիտ կերպով մի՛ անարգէր զանի :

Գիտցիր որ ճառս ծափահարողներուն, և ևս ուսուցչական խոսքը շնորհաւորողներուն մէջ ջուր ետզմանի ուղեղէդ շատ աւելի մակուած անձնաւորութիւններ կային՝ որոնցմէն էր նաեւ հոգաբարձութիւնն ու երիտասարդութիւնը :

(Բաց է թողնված ճառի բացատրութիւնը) :

Այո՛ արգահատելի մարդուկ, իմ ճառովս գետնէն աւելի վար ստորնացուցի, բայց ոչ թէ ամենքը, այլ մէկ քանի նմաններդ որոնք անկումէ անկում կը գլտորին, եւ իրենց պարտութեանը մէջ մոլեգնած՝ ամենէն ցած զէնքերով կը փորձեն նորէն ու նորէն չափուիլ բոլոր անոնց հետ որոնք անհամեմատ առաւելութիւններով կարող են վրդովել իրենց շահաւէտ հանգստութիւնը, Հասկցար, զէն նորէն խեղաթիւրէ, եւ այս ասպտակէն յետոյ, կոկորդը մաքրելով, շարունակէ գարշելի սուտերը :

Բայց հաւատա՛ որ ջուր անբան, անուանած ժողովուրդը ուշ կամ կանուխ կը հասկնայ իր շուրջը գտնուած ազականութեան պատկանդարանները կը թքնէ անոնց երեսին, եւ «ամօթ է» կը պօռայ երբ յանդգնի նորէն սուտ խօսիլ ու «խահվէները զրպարտութեան պատիլ :

Վ. ՇԱՀՐԻՄՍԿԻ
24 յուլիս 1899
«Շարժում» թիւ 147

ԵՈՐՈՊԵՆՆ (ԵՒՐՈՊԱՅԻ) —(00)—

Պարիզում, Ֆրանսերէն լեզուով, սկսվել է հրատարակվել մի նոր շաբաթաթերթ՝ «Եւրոպացի» անունով :

«Եւրոպացի»-ի առաջին համարը շնորհակալութեամբ ընդունելով շտապում ենք մեր ընթերցողներին ծանօթացնել այդ թերթի ուղղութեան հետ, որը շա՛ համակրելի է :

Թերթը շատ աժան է. տարեկան 15 ֆր., և նրան աշխատակցելու են թէֆրանոսյի և օտար գրագէտներ, գիտնականներ, հրուպարակասուներ, ճարտարեւեստներ : Խորհուրդը կը տայինք մեր ֆրանսագէտ ընթերցողներին բաժանորդ գրվել այդ տեսակ մի թերթի, որը կարող է շատ մեծ նիւթ մատակարարել նրանց ուղեղին և սրտին :

«Եւրոպացի»-ի խմբագրութիւնը առաջին նախօրեւածով յայտարարում է թերթի երեսան գալու պատճառը և նպատակը, որի ամփոփումը հետեւեալն է :

— Մեծ երկրների մամուլի մեծ մասը ճշգրիտ և կատարեալ տեղեկութիւններ չէ տալիս զանազան ազգերի կեանքի մասին. եթէ չէ ստում, գոնէ լռում է ճշմարտութեան մասին, որովհետեւ լրագիրներին վարիչների յայտնի մասը ոչ ու է գաղափարի է ծառայում և ոչ էլ ու է կուսակցութեան :

Վարիչները աւելի դրամական ձեռնարկութիւններ կ'աւտեր են, և դրամական շահերը ներանց վարմունքի մէջ առաջին տեղն են բռնում :

Երէք տոտրածված լեզուներով

(*) Շահրիման երբ ճիշդ կը խօսէր, երկուս տարի առաջ, թէ հիմա՛յս իՄԲ.

թերթերի մեծ մասը զեկալարվում են այնպիսի մարդկանցով, որոնք պատկանում են ու է մեծ պետութեան, այդ պատճառով էլ միջազգային հարցերի վերաբերմամբ անկարող են անկողմակալ լինել. մասնաւանդ փոքր երկրները ապահով չեն թէ իրենց օրինաւոր շահերը ցանկալի խղճմտանքով աչքի կառնվեն :

Բայց բոլոր երկրների մէջ էլ կան մարդիկ, որոնք համոզված են թէ ինչպէս անհատներ, նոյնպէս ժողովրդների մէջ համեմաբար խութիւնը անհրժեշտ է, որովհետեւ ամէնքն էլ հաւասարապէս աշխատում են քաղաքակրթութեան ընդհանուր գործի համար որովհետեւ ամէնքն էլ շահ ունեն պիտութեան և ազատութեան յառաջադիմութեան մէջ : Այդ պատճառով էլ այդ տեսակ մարդիկ փոխադարձ համակրութիւն պէտք է ունենան իրարու հանդէպ : Ամէն տեղ էլ կան մարդիկ որոնք տանջվել և վերաւորվել են վերջին տարիներում ժողովրդների և քաղաքացիների իրաւունքները բռնաբարված տեսնելով :

Այդ մարդիկը տարուղնած քաղաքակրթաշխարհի մէջ, կարելի է որ կազմեն արդարութեան և մարդասիրութեան կուսակցութիւնը :

Եւրոպական կարծիքը նոր պահանջներ է ստեղծել, եւրոպական հասարակութեան համար պէտք է մի լրագիր որի մէջ նա կարողանայ գտնել ճշգրիտ տեղեկութիւններ զանազան ազգերի կեանքի մասին : Եւրոպացիների համար պէտք է մի օրգան որի մէջ կարելի լինի փրտուունքի և ազատութեան դատը պաշտպանել :

«Եւրոպացի»-ն ցանկանում է ալը նոր պահանջներին ծառայել :

«Եւրոպացի»-ն չէ պատկանում ոչ մի երկրի և ոչ ու է կուսակցութեան : Նա բոլորովին անկախօրէն և անկողմակալութեամբ պէտք է քննադատի կառավարութիւնների գործերը և կուսակցութիւններին բռնած գիրքը :

Թէ միջազգային քաղաքական խնդիրների մէջ և թէ ուրիշ հարցերում «Եւրոպացի» իրաւունքը զերազատում է ուժից, նա յարգում է բոլոր ազգերի իրաւունքները, ինչ քանակութեան և ուժի տէր էլ որ լինին նրանք, որովհետեւ այդ յարգանքն է միջազգայնութեան հիմնաքարը, որին «Եւրոպացի»-ն պատկանում է :

«Եւրոպացի»-ն ցանկանում է ազատութիւն : արդարութիւն և խաղաղութիւն շահագրգռվում է այն ամէն վերանորոգումներով, որոնց նպատակն է երաշխաւորել բոլոր անհատների և ազգերի շահ :

պահպանութիւնը և խաղաղ շահեր
բաշխութիւնը եւրոպայի մէջ, որ
րի շնորհիւ ամէն ինչ պէտք է կա-
րողանան վայելիլ յոռաջգիտող
գիտութեան արդիւնքները :

Գեղեցիկ նպատակ ունի «Եւրո-
պացի» չէ՞ : շնորհատու՞մ ենք
նրա երեւան գալը և նրա խըմ-
բագր. մտղթում որ կարողանալ
իրեն գրօջակը անադարտ և բարձր
պահել եւրոպական մամուլի մէջ,
որի անկումը ստիպել է յարգելի
խմբագիրներին հրատարակել
«Եւրոպացի» :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ալիշանի թաղումը կատարուեց
է նոյ. 11 բաւական շքեղ կերպով
Բազմազէպ կը նկարագրէ հիւան-
դութիւնը. մահը և թաղումը :
Յաջորդ համարի մէջ կարտատը-
պենք այդ նկարագրութիւնը :

— Թուրք կառավարութիւնը
Անգրանիկին և իր ընկերներուն
խօստացած է ազատ ձգել, և թէ
անձնատուր ըլլան : Ազատութիւնը
կը խօստացուի Թուրքիայի սահ-
մաններէն դուրս ելլալու պայմա-
նով :

Անգրանիկ պատասխանած է թէ
իր ոտացած հրահանգները զին-
քը կարգիլեն անձնատուր ըլլալ :

— Կրօնական ժողովը որոշած է
կաթողիկոսէն խնդրել որ դարձ-
եալ շարունակէ իր նպատակները
Մուշի Ա. Կարապետ վանքին քա-
նի մը մասերու վերաշինութեան
համար :

— Պօլսոյ հայ բողոքականները
յանձնաժողով մը կազմեցին Կար-
նի երկրաշարժէն քնատածնե-
րուն օգնելու համար :

— Մարտ 31 Իզմիրի սպառնալի
հիւանդանոցի հարիւր ամեակը
պիտի տօնուի :

— Ռուսոյ գէ Տիկին Պալատ
Փասուլաճեան «Արեւելեան» խում-
բը կազմող երիտասարդներու
կողմէ նամակ մը զրկած է մեզ,
որով կը հաղորդէ թէ՞ իրենց
դերասանակազմը, պ. Գրիգոր Յա-
կոբեան զիրենք խաբած տարած
է զանազան քաղաքներ և վերջի,
Ռուսուգի մէջ թողլով անոց՝
անդրամ, թողած վառնա եկած է
Վէսէլօ խմբին խմբին հետ միա-
նալու :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Ռուս դեսպանը Բ. Գրան իրատ գի-
մում ըրեր է պատերազմական սու-
գանքին վճարման համար. շեշտելով
որ նշանակուած 350000 ռուբլին մին-
չու հիմա միայն 40000 ստացուած է :
— Պօլսն կը հաղորդեն որ Միսս

Սթօն և Տիկին Էրկա ողջ առողջ են :
— Թարազու գի տարներէն մաս
մը ապստամբելու վրայ են թուրք
կառավարութեան զէմ :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Լուի Պօթո զորավարը յայտարար-
ած է որ պօլսնի կրնան դեռ
հինգ ասորի ալ պատերազմել : Վա-
ստօղը Անգլիա պիտի ըլլայ, ու-
րովհետեւ այդ միջոցին ամբողջ Գա-
բը պիտի ապստամբի :

— Անգլիական կառավարութիւնը
մեծ պետութեանց ծանուցազոյ մը
հաղորդած է որ պատերազմը յառա-
ջիկայ մարտին պիտի վերջանայ :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Փոխտուրքիւնը Կառավարութեան է
ազգային ժողովին. կարեւոր երես-
փոխաններ հակառակ խօսքեր են փո-
խտուրքեան պայմանները շատ վա-
սակար գտնելով Պօլսի կարիքը ներկա-
յի եւ ապագային համար :

Նոյն իւր Գարազէլիստներն շա-
տերը հակառակ են փոխտուրքեան
և մտնորովի :

«Բօշմա» թերթը կը հաղորդէ որ,
եթէ փոխտուրքեան մերժուի, Գա-
րազէլով պիտի հրաժարի, թէև իր
ընկերները շատ խնդրած են որ փո-
խտուրքեան պատճառով դահլիճին
հրաժարման խնդիր չը յարուցանէ :
Գաւառներէն բազմաթիւ հեռա-
գիրներ կուգան երեսփոխաններուն
որ փոխտուրքեան մերժեն :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Թօլսթոյի առողջութիւն վերհաս-
տատուած է

Վարչապետի կառավարութիւնը
մեծ շքով տեղն է զրբեր Գերմանական
հիւպատոսարանի զինանշանը և
Գերմանիոյ յայտարարած է որ զայն
անարդող լին ուսանողները խօսիւ
պիտի պատժուին :

Ա Ն Գ Լ Ի Ա

Պօմպէյէն կը հաղորդեն որ անգ-
լիական երկու զրահաւորներ կրկին
Բօլէթ գացել են, կր կարծուի թէ
հոն խաղվութիւնները վերսկսած են :

— Անգլիական պօրսան այս օրերս
կրկին կենդանութիւն ստացեր է,
կը հաւատացնեն թէ կտոա-
վարութիւնը թրանսվալէն բարե-
գուշակ լուրեր ունի եւ գաղտնի կը
պահէ :

Կ Ա Ղ Ա Ն Դ Ջ Է Գ

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը
արձակ և ոտանաւոր :

Հեղինակը զայն գրչի պրօսանք
անուանած է, և իրաւ ալ գրչի
պրօսանք է :

Գինն է 40 սնթ. կը ծախուի
Վարնայի մէջ Զարպհանէլեան
գրատունը :

ԳՈՐԾԱՐԱՆ

— 0 —

Լաթ ներկելու և քիմիա-
պէս մտքերու :

Վ. Ք Ռ Օ Յ Ի Լ Օ Յ

ԵՒ

ԽՎ. Մ. ԿՈՒՌՅ

ՐՈՒՍՅՈՒՔ

Սոյն գործարանի մասնաճիւղը
որուն կառավարին է Բէթթ
ԿԼՈՒՇ-ՔՕՅ ընդհանրիկ խմ-
բագիրը, քաղաքային պարտէ-
զին գիւմարը :

Կը ներկէ կանանց և մանկա-
կատ զգեստներ, մետաքսէ,
բրդէ և բամբակէ գործուած ք-
ներ, նոյնպէս վաճառականական
սպրանքներ ու մանուածքներ :
Ներկը չի թափիր, միայն
ներկելու տալիք նիւթերը մա-
շած չի պիտի ըլլան :
Գիները չափաւոր են :

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

— (D) —

ՎԷՍԵԼՕ

Այս գիշեր Վէսէլօ հայ գերա-
տանական խմբին կողմանէ պիտի
ներկայացուի՝

ԱՆՄԵՂ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԸ

Կամ

ՃԵՐՄԱԿ ՁԵՌՆՈՑԸ

տրամքօժրաի 6 արար

ժիծադաշարժ զուեշտ մը

Նոր եկող իտալական երգե-
ցիկ խումբին կողմանէ երգեր եւ
պարեր :

Կիրակի գիշեր
ԲԱՆԶՎԷՃԻ ՎԷԼԻՊ ՊԱՊԱ

Կատակախաղ 4 արարուած

Օթէլլօյի փորձը կը շարունակուի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Հայդերբերգում հիմնուել է մի գրա-
դարան, որ նպատակ է գրել ծանօթա-
ցրել արտասահմանի հայ ուսանո-
ղութեան եւ ընդհանրապէս հետաք-
քրեող անձանց հայոց ներկայ կեան-
քին վերաբերեալ հայերէն եւ օտար
լեզուով լոյս տեսած գրքերի հետ :
Գրադարանը ունի յիշուլ նպատակով
հրատարակած գրքերի մի համեմատ թիւ
որի համար յայտնուած ենք նուիրա-
տու անձանց մեր խորին շնորհակա-
լութիւնը եւ խնդրում ենք այն
անձանց հաստատութիւններին,
որոնք կամենում են գրքերով եւ
զւերաստուութիւններով օգնել գրա-
դարանին, բարեհաճին ուղարկել
հետեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelberg Kaiser 31
№ 5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փիլիպպէի «Հայկական երգեցիկ
խումբը» աւ շրջանին մէջ վերս-
կած ըլլալով արդէն իր պա-
րապմունքները, ձեռնարկած է
նաեւ պարբերաբար հրատարա-
կելու եւրոպական ձայնագրու-
թեամբ հայկական հին եւ նոր
քառաձայն երգեր, մաքուր թղ-
թի վրայ, յստակ վիճակի :

Այս ասիւն երգեցիկ խումբի
վարչութիւնը ներկայիս կը յայտ
նէ Պոլսի կարիք և արտասահմանի
երաժշտաէր հայ երիտասարդու-
թեան, որ եթէ աս երգերէն
փախագողներ կան, հաճին դի-
մել վարչը նշանակուած հասցէին՝
վճարելով «մէկ թուղթին» հա-
մար 20 սանթիմ. փոստի ծախսը
մեր վրայ : Կան երգեր որոնք
մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-
կանան :

Արտասահմանի համար 35 սնթ.
Փիլիպպէ վարչ. «Հայկ. երգե-
ցիկ խումբին» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippoppe

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

— 0 —

Եւրոպայի Հայ Ուս. Միութեան
նամակ ուղարկելու եւ առհասարակ
ամէն տեսակ գիմում ընելու համար
պէտք է գիմել հետեւեալ հասցէով՝
Իւնիոն Տէ Զէյլիսիան Արտ.
L'horap rja sp L'efor sp Եիւրի 2

Սուխա Ժրնէվ
Կարգադիր Յաննաճոյղով

ԱԶԳ

— 0 —

Վառնայի ազգային մանկա-
պարտէզին համար կարող ման-
կապարտէզուհի մը կուղուի :
գոհացուցիչ ամաթոշակ. զիմել
անձամբ կամ նամակաւ ահագային
վարժարանաց հոգաբարձութեան :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

— 0 —

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցէտոմս, նամա-
կադրուի, հարսանեկան հրա-
րադիր, մահադր :

Գիները յոյժ գիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԼԱՆՍԻԿ

Отговорникъ:
Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна